


Ի Յիշատակ

Սրբոց Նահատակաց Գապայեան Նախակրթարանի եւ Ֆերահեան
Երկրորդական Վարժարանի, եւ
Սրբոց Նահատակաց ՀՕՄԻ ԱշխԷՆ Փիլաճեան Մանկամսուրի
Ուսումնական Մարմինը, տնօրէնութիւնը եւ ուսուցչական կազմը

իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն դպրոցի




Հիմնադիր տնօրէն Գաբրիէլ Ինճեճիկեանի մահուան տխուր առիթով, Ապրիլ 14, 2019

Լոս անճելըսի, Էնսիւս շրջանին մէջ, 1964ին հիմնադրուած Ֆերահեան Երկրորդական Վարժարանը, իր աւելի քան 2,200 շրջանաւարտներով եւ մանկամսուրէն մինչեւ աւարտական դասարանի իր շուրջ 700 աշակերտներով, մեծապէս պարտական կը զգայ դպրոցի հիմնադիր տնօրէնին, իր 25 տարիներու ժրաջան ու տքնաջան գործունեութեան համար, որուն արդիւնքը եղաւ Միացեալ Նահանգներու առաջին հայկական երկրորդական վարժարանի ստեղծումն ու գոյատեւումը



Հայերէնի Վաստակաւոր Ուսուցիչ Տիկին Անահիտ Մէյմարեանի մահուան տխուր առիթով, Ապրիլ 14, 2019

Շնորհիւ Անահիտ Մէմարեանին դպրոցիս հարիւրաւոր մանուկներ ու պատանիներ սորվեցան կարդալ ու գրել հայերէն:
Տիկին Մէյմարեան իր կամաւոր աշխատանքով եղաւ դպրոցին աւելի քան յիսուն տարիներու պատմագիրը:
Ան իր գրիչով անմահացուց Մաթեոս Ֆերահեանին, Գաբրիէլ Ինճեճիկեանին եւ հարիւրաւոր ուսուցիչներու եւ դպրոցական մարմիններուն մէջ աշխատողներուն:



Երաժշտութեան Տասնամեակներու Ուսուցիչ Մաեսթրօ Ալֆրէդ Մարդոյանի մահուան տխուր առիթով, Ապրիլ 8, 2019

Շնորհիւ Ալֆրէդ Մարտոյեանին դպրոցիս Մանկամսուրէն, Նախակրթարանէն եւ Երկրորդական վարժարանէն ներս հարիւրաւոր մանուկներ ու պատանիներ կրցան սորվիլ ու ըմբռնել հայ երգն ու երաժշտութիւնը: